ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

08.02.2016 14:05

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի կայքէջի «Գրադարան» բաժնում բացվել է «**Արդարացման դատական ակտեր**» նոր ենթաբաժինը, որում նախատեսվում է հրապարակել փաստաբանների և հանրային պաշտպանների վարած գործերով կայացված արդարացման դատական ակտերը:

«Արդարացման դատական ակտեր» ենթաբաժնում կարող են հրապարակվել ամբաստանյալին արդարացնող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավճիռները, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական և ՀՀ վճռաբեկ դատարանների որոշումները:

Նշված ենթաբաժինը լրացնելու համար խնդրում ենք ՀՀ փաստաբանների պալատին **info@advocates.am** էլեկտրոնային փոստի հասցեով տրամադրել Ձեր մասնակցությամբ քննված քրեական գործերով կայացված արդարացման դատական ակտերի տեքստը:

<u>Ուշադրություն.</u> *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայքէջի սերվերի հնարավորությունները ծավալային առումով սահմանափակ են, խնդրում ենք տրամադրել դատական ակտի տեքստը MS Word ձևաչափով (օրինակ՝ ներբեռնված «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից):*

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })